

## Աստղագիտական հետազոտություններ Քարահունջում

Մեպտեմբերի 20-24-ը Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Մերգեյ Ներսիսյանը և ֆիզիկա մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրանտ Մանասար Խալաթյանը Սիսիան քաղաքի մոտ գտնվող Քարահունջի հին աստղադիտարանում կատարել են աստղագիտական բնույթի և տեղանքում գտնվող շինությունների հետազոտական աշխատանքներ:



Մեպտեմբերի 23-ին՝ աշնանային գիշերի սկզբին օրը, դիտվել է արևածագը. պարզվել է, որ արեգակի սկավառակը սկսում է երևալ ծագման պահին համար 79 քարի վրա արված անցքից:

Անցքից լուսանկարվել է Արեգակի սկավառակի երևալու ողջ ընթացքը. հնարավոր է, որ տեղաբնակներն այսպես են որոշել աշնան սկիզբը, տարին, ինչն էլ հաստատում է Քարահունջի աստղադիտարան լինելու վարկածը:



,Չափագրվել և լուսանկարվել են տեղաբնականների կացարաններն, առանձին քարերի տեղակայմամբ Արեգակի և Լուսնի որոշման պահերը: Հավաքվել է մշակման համար հսկայական նյութ և արվել են որոշ նախնական եզրահանգումներ», -նշեց Սերգեյ Ներսիսյանը:

Վերջինս վստահ է՝ համադրելով վերոնշյալը այլ հնագետ, պատմաբան, ազգագրագետ, աստղագետ հեղինակների աշխատանքների հետ հնարավոր է անել համապարփակ և ընդհանրական եզրահանգումներ:

